ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.03.2022թ. N 153/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.04.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ժ.Կարապետյանը, Լ.Զաքարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանգասարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

-«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Բագրևանդի-82)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Աշխատանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			նախահաշվային ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ	Դրոշմապիտակների տպագրության աշխատանքներ	3 087 000 000	20%	3 704 400 000	**3 704 400 00**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

-«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյան

Անդամներ՝ Ժ.Կարապետյան

Լ.Զաքարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան